ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

DOI:10.57192/18291864-2024.3-3

ՀԱՅԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱԿՐԹԱԿԱՆ ԳՈՐԾԱՌՈՒՅԹԸ*

Բանալի բառեր – հայագիտություն, պետության գիտակցված պահանջմունքներ, հայկական հայացք, անբաժանելիների ամբողջականություն, ինտեգրում, ունիֆիկացիա, կլինիկական մահ, ազգայնության սկզբունք:

Մեզանում հայագիտության նպատակների ու գործառույթների մասին բանավեճերը սովորաբար ծավալվում են Հայաստանի շուրջ տեղի ունեցող արտաքին-քաղաքական տեղաշարժերին ու դրանց ուղեկցող ներքաղաքական զարգացումներին զուգահեռ:

Դա վկայում է այն մասին, որ ավելի քան երեք տասնամյակի անկախություն ունեցող Հայաստանը դեռևս չի որոշել իր տեղն ու դերը փոփոխվող աշխարհում: Ուստի մեր ապագայի անորոշ լինելու պայմաններում հայագետների շրջանում սկիզբ է առել մի տարօրինակ բրոունյան շարժում, որը գիտական բարեվարքության հետ կապ չունեցող աբսուրդի թատրոն է հիշեցնում:

Անշուշտ, հայագիտությունն առանձին գիտակարգ չէ, այլ Հայաստան երկրի ու հայ ժողովրդի մասին գիտությունների հանրագումար, ուստի անընդունելի են ինչպես նրա դերակատարությունը չափազանցնելու և «հայկական գիտկոմի» վերածելու փորձերը, այնպես էլ անկախ պետականությանն անհրաժեշտ **հայկական հայացք** ձևավորելու սուր պահանջարկի անտեսումը: Քանզի հայոց պատմության, հայ գրականության և այլ հումանիտար գիտությունների ընդհանուր-

* Ընդունվել է տպագրության 30.10.2024:

հայագիտական ընկալումը առաջադիմության սեփական բանաձևի հստակեցման նախապայմանն է:

Ավելին, Հայաստանի անկախացմանը հաջորդած գլոբալիզացիայի դարաշրջանում մեր ինքնաճանաչողության խնդիրը սոսկ կոգնիտիվ առաջադրանք չէ, այլ ինքնապահպանման, ինքնավերարտադրության և ինքնադրսևորման մասին գիտելիքների ու հմտու- թյունների հանրագումար: Դրանց շրջագծում հայոց պատմությունը, գրականությունը, լեզուն կամ մշակույթը որպես մեկ ամբողջություն, մեզանից անկախ իրականացնում են նվազագույնը՝ չորս գործառույթներ՝ գիտաճանաչողական, դիդակտիկ-ուսուցողական, ազգային արժեքների ձևավորման ու սեփական հիմքի վրա զարգացման, և վերջապես՝ պաշտպանության ու քարոզչության: Դա հնարավոր է դարձել այն պատճառով, որ, եթե նախկինում հայագիտությունը սոսկ Հայաստանի ու հայերի մասին ակադեմիական գիտելիք էր, ապա այժմ այն հետապնդում է հայկական ինքնության բաղադրիչների բացահայտման, պահպանության, զարգացման և ներկայացման խնդիր- ները:

Անշուշտ, մեզ կարող են հակաճառել, որ դա հակասում է ակադեմիզմի տարրական չափորոշիչներին, քանզի ուսումնասիրության առարկայի մասին ճշգրիտ գիտելիքի միջոցով է հնարավոր գտնել ոչ միայն անցյալի, այլև ներկայի բազում հարցերի պատասխանները: Բայց խնդիրն այն է, որ գիտական ճշմարտության ու քաղաքական նպատակահարմարության հարցը գոյություն ունի առանձին գիտակարգերի շրջանակներում, որոնք ունեն իրենց տեսությունն ու մեթոդը: Ավելին, հումանիտար գիտություններում առավել անթույլատրելի է ճշմարտության շրջանցումը, քանի որ այստեղ գիտական գիտելիքն ինչ-որ առումով սեփական թերությունների հաղթահարման դեղատոմս է: Չմոռանանք նաև, որ ի տարբերություն բնական գիտությունների՝ հումանիտար գիտությունների առարկան մարդն է ու նրա հոգեմտավոր գործունեությունն ապահովող իրողությունները: Մինչդեռ հասարակության պրոգրեսիվ զարգացման ու մարդու կատարելագործման խնդիրները հաճախ հակասում են իրար, քանզի դրանք լուծելի են միայն «անբաժանելիների ամբողջականությանը...»[1] հասնելու միջոցով:

[1] **Михайловский Н. К.**, Что такое прогресс?, в кн.: «Сочинения Н. К. Михайловского», том I, СПб, 1896 с. 150.

Հայագիտության նպատակների այս ինտեգրալ ընկալումն առաջին անգամ համակարգված տեսք է ստացել 2004 թ. «21-րդ դար» ամսագրում երկու մասով հրապարակված մեր **«Հայագիտությունը 21-րդ դարում»** ծրագրային ուսումնասիրության մեջ: Բայց ՀՀ կառավարությանն առընթեր «Նորավանք» գիտակրթական հիմնադրամի պատվիրած ու նրա սեփականությունը դարձած հայագիտության ոլորտի բարեփոխման այդ ամբողջական ծրագրի բազմաթիվ առաջարկությունները անցած 20 տարիների ընթացքում, դժբախտաբար, մնացել են թղթի վրա: Ուստի 20 տարի անց մեզ իրավունք ենք վերապահում եզրակացնելու, որ նրանում առկա նախազգուշացումները նույնպես իրականություն են դարձել, և գլոբալիզացիայի պայմաններում հայագիտական ողջ համակարգը հոգեվարքի մեջ է հայտնվել: Դրա հիմնական պատճառը 2004 թ. մեր կողմից կանխատեսված՝ գլոբալիզացիայի անկասելի ընթացքից բխող մարտահրավերների անտեսումն է, որն ինտեգրելով Երկիր մոլորակը, «ստեղծում է ազգային շահերի ընկալման հորիզոնական և ուղղահայաց դիտանկյունների վրա հիմնված մի նոր՝ վիրտուալ իրականություն»[2]: Թեև սա արդեն կատարված փաստ է, բայց բարեբախտաբար **ինտեգրման** գործընթացը չի հանգեցրել **ունիֆիկացիայի** ու **համահարթեցումի**, ինչպես ժամանակին ահազանգում էին գլոբալիզացիայի հակառակորդները**:** Ավելին, ազգային շահերի ընկալման տարածաաշխարհագրական հարթության պահպանմանը զուգահեռ՝ գլոբալիզացիան հայերիս նման դիասպորալ ազգերին ընձեռել է որպես պետության դիրքերն ամրապնդող **ազգ-արժեք** գործելու հնարավորություն:

Մինչդեռ անցած 20-30 տարիներին գործ ունեինք հետխորհրդային լեգիտիմության վրա հիմնված իներցիոն պետական համակարգի հետ, որն անհաղորդ էր գլոբալ զարգացումներին, ուստի հայաստանյան հայագիտությունն այդ ընթացքում կոնսերվացված վիճակից փոխադրվեց **կլինիկական մահվան** դրության: Այսինքն՝ խորհրդային հայագիտական համակարգը պահպանվեց որպես ձև, բայց ո՛չ որպես նոր միջավայրին համապատասխանող բովանդակություն և աստիճանաբար վերածվեց անընդհատ նույնը կրկնող ձանձրալի թատրոնի: Այն ամենը ինչը ստեղծվեց այդ տարիներին՝ որպես գիտական նո-

[2] **Խուդինյան Գ.**, Հայագիտությունը 21-րդ դարում. Մաս առաջին: Ազգային շահերը եվ հայագիտության նպատակները մրցակցային նոր միջավայրում, «21-ՐԴ ԴԱՐ» , Եր., 2004, N 3, էջ 24:

ռույթ, կլինիկական մահվան մեջ գտնող համակարգից սահմանա-զատվելու և ֆինանսավորման այլընտրանքային աղբյուրներ գտնելու արդյունք էր: Բայց քանի որ վերջին տարիներին փոխվեցին նաև պե-տության գիտակցված պահանջմունքների իշխանական ընկալումնե-ը՝ իներցիոն վիճակից տեղափոխվելով արդիականացման քողի տակ իրականացվող ապազգայնացման հարթություն, գիտական գործունեության նմանակումները երկկողմանի բնույթ ստացան: 1991-ից հետո **ազգայնության սկզբունքը**[3] նենգափոխած ԽՍՀՄ-ի կարո-տախտի պահպանողական երազախաբության փոխարեն՝ պետութ-յունն այսօր հայագետներին է մատուցում թուրքական ֆաշիզմին անձ-նատուր լինելու հեղափոխական երազախաբությունը, որը խորաման-կաբար քողարկվում է արևմտյան արժեհամակարգի ցուցանակով: Ուստի հայագիտության ոլորտում ծավալվող երկու՝ հավասարապես ապազգային փորձարարությունների ներկա աղմկոտ դիմակայութ-յունն իրականում ապազգայնացման հին ու նոր բնորդների կրողը դարձած «հայրերի և որդիների» պայքար է: Մերժելով գլոբալիզա-ցիայի դարաշրջանում միայն իր **քաղաքակրթական հիմքի** վրա «բացվող» **հայկականությունը**, նրանք ինքնաբերաբար սպասարկում են Հայաստանի իրավունքների ռուս-թուրքական ածուրդը:

*Պարզառն այն է, որ նախքան մեր տարածաշրջանում սկիզբ առած համար-կումային բնորդների դիմակայությունը, Հայաստանն ինքը վաղուց արդեն ֆիքսված էր որպես դրանցից մեկի՝ **առանցքային ժամանակից** (800-200 թթ. մ.թ.ա.) սկսած հնդեվրոպական կամ արիական ժողովուրդների կողմից կերտ-ված **պարմական ամբողջի** մաս, որի փուլ առ փուլ զարգացման արդյունքում հետագայում ձևավորվել է եվրոպական և ապա՝ համաշխարհային քաղա-քակրթությունը: Ժամանակակից ըմբռնումով պետություն ստեղծած առաջին ազգից՝ պարսիկներից, մինչև հին հույները, հռոմեացիներն ու ռոմանա-գեր-մանական աշխարհը ծավալված փոխհարստացումի ու սինթեզի արդյունքում Երկիր մոլորակն իրականում վերածվել է ընդամենը մեկ՝ **գլոբալ քաղա-քակրթության**: Հնդեվրոպական ժողովուրդների կողմից ստեղծված այդ ամ-բողջի ներսում է ծավալվել պրոգրեսը՝ մեծ ու փոքր գյուտերի փոխանցման միջոցով՝ գրերից սկսած մինչև նորագույն տեխնոլոգիաները: Նրանում Հայաս-*

[3] **Ազգայնության սկզբունք** - Le principe des nationalités - Ֆրանսիական Մեծ հեղափոխությունից ծնված ազգերի ինքնորոշման ու ազգ պետությունների ձևավորման գործընթացի տեսական հիմնավորումը: Հիշեցնենք, որ այս զուլալ ակունքից սերող ազգային-ազատագրական պայքարի հայ ականավոր տեսաբանների աշխատություններում՝ Միքայել Նալբանդյանից ու Ռաֆֆուց՝ մինչև ՀՅ Դաշնակցություն, տեղ է գտել **ազգայնություն** և ոչ թե **ազգայնականություն** հասկացությունը:

գանը պատմականորեն ունեցել է իր տեղն ու դերը, բայց հետխորհրդային շրջանում հայտնվելով իր հողերի ու իրավունքների ռուս-թուրքական ճաշուրդի մեջ, կանգնել է մեկ ուրիշ վտանգի առջև: Ժամանակին հնդեվրոպական քաղաքակրթության սահմանագիծը ներխուժած՝ թյուրքերը, հունգարացիները և նրանց լոնդոնսիթիական մանիպուլյատիվ ուղեկիցները, վերջերս կրկին առաջ են մղել իրենց «Թուրան» նախագիծը, որում ցանկանում է իր մասնաբաժինն ունենալ նաև Ռուսաստանի իշխող վերնախավը: Քաղաքակրթական այլընտրանք դառնալու հավակնություն ունեցող նման ծավալուն նախագծի դեմ մեկուսի պայքարը մեզ ոչ մի տեղ չի տանելու, քանի դեռ Հայաստանի հանրության կողմից չի առաջադրվել քաղաքակրթական հիմք ունեցող սեփական նախագիծը:

Տարածաշրջանում սկիզբ առած համարկումային բնորդների դիմակայությունը հուշում է, որ ժամանակին մեր իսկ մասնակցությամբ հնդեվրոպական ժողովուրդների կողմից ստեղծված գլոբալ քաղաքակրթությունն արդեն բախում է Հայաստանի դռներն ու հարց է տալիս մեզ՝ «դու ինձ չե՞ս ճանաչում, բարեկամս»: Իսկապես, իր անտիկ հիմքով՝ **հելլենիստական**, միջնադարյան հիմքով՝ **քրիստոնեական**, իսկ նոր ժամանակների կտրվածքով՝ **լուսավորական** մշակույթի զարգացման բոլոր փուլերն անցած Հայաստանն ինքն իրեն ճանաչելու խնդիր ունի: Ի վերջո մենք՝ հայերս որպես ժամանակակից ազգ ու պետություն վերականգնվել ենք հենց եվրոպական լուսավորականության ու ֆրանսիական հեղափոխության առաջադրած՝ ազգայնության սկզբունքի հիման վրա:

Ներկայումս՝ գլոբալիզացիայի դարաշրջանում, միայն այդ **քաղաքակրթական պորտալարը** վերականգնելու միջոցով է հնարավոր գտնել սեփական ինտեգրացիոն տարածքը, որի համախմբումը թուրանական նախագիծը շրջափակելու միակ հնարավորությունն է: Մեր հնդեվրոպական պորտալարի վերականգնման խնդիրն ունի իր աշխարհաքաղաքական ասպեկտը՝ Հնդկաստան-Իրան-Հայաստան-Վրաստան-Եվրոպա պոտենցիալ առանցքը, դրանից բխող տնտեսական հնարավորությունները և այդ ամենի վրա հաստատվող հնդեվրոպական կամ արիական ժողովուրդների մշակութային ընդհանրությունների բացահայտման գիտական առաջադրանքը: Իսկ դա պահանջում է սահմանել, որ ճշմարիտ ազգայինը՝ հայկականությունը, արևմտականացման հակաթեզը չէ և ոչ էլ արևելյան ավանդույթի պարզ կրկնությունը: Հայկականությունը հնդեվրոպական ժողովուրդների

մոտ ի սկզբանե առկա ներքին **ներդաշնակության (հարմոնիայի)** վերականգնմանը միտված արևելյան միջավայրի արևմտականացման հզոր ազդակն է ու դրանց սինթեզի հաջորդական հանգրվանների մարմնավորումը: Չմոռանանք, որ մեր ամենահիմաստուն արքան՝ Տիգրան Մեծը, իր հիմնած Տիգրանակերտում ստեղծել էր երկու խորհրդանշական տարածքներ՝ ամրոցից ներս՝ հունական թատրոն, իսկ դրանից դուրս՝ վիթխարի պարադիս (պարտեզ)՝ դրանով իսկ համադրելով «Արևմուտքի և Արևելքի երկու հիմնարար գաղափարները՝ անհատի ազատությունը և կանոնակարգված աշխարհի ներդաշնակությունը (հարմոնիա)»[4]: Հայը որպես ազատ մարդ է մուտք գործել ներդաշնակության պարտեզը, ուստի իր քաղաքակրթական դերակատարությունը վերստանձնելու համար նախ՝ պետք է ճանաչի սեփական **գլոբալ ռեգիոնը**:

Դրա համար հայագիտության չորս ավանդական գործառույթներին ներկայումս անհրաժեշտ է ավելացնել հինգերորդ՝ քաղաքակրթական գործառույթը, այսինքն՝ Հայաստանին հոգեհարազատ քաղաքակրթական միջավայրի փնտրտուքի գիտական առաջադրանքը: Ի տարբերություն թուրանական նախագծի, որը փաստորեն արդեն սկսել է մեր խաղաղ կլանումը, հայերիս հոգեհարազատ ռոմանա-գերմանական ու հնդ-իրանական աշխարհները քաղաքակրթական առումով կամրջելու խնդիրը մեզանում դեռևս խորությամբ չի էլ գիտակցվել: Մինչդեռ հայկական մշակույթի արևելյան բացադրատարրերը թուրանական նախագիծի ճարտարապետների առջև արդեն լայնորեն բացել են հայերիս հանդեպ վրացիների **մեգրելական էքսպերիմենտը** կիրառելու հնարավորությունը: Չմոռանանք, որ վրացիներից լիովին տարբեր ծագում ունեցող մեգրել ժողովուրդը կլանվել ու վրացական սուբէթնոսի է վերածվել նրան բարձրակարգ վրացիներ հռչակելու միջոցով:

Ներկայումս թուրանական նախագծի ճարտարապետների կողմից հայության խաղաղ կլանման ու սուբէթնոսի վերածելու գործընթացը հունավորվում է արևելյան մշակույթի կրող հայաստանաբնակ հայերին թուրքական մշակույթի դրոշակակիրներ ներկայացնելու միջոցով: Մեր ներսում բուն դրած այդ մշակույթի բաղադրատարրերը խթանելու համար Թուրքիայում արդեն խրախուսվում են հայկական երգերը,

---

[4] **Մանասերյան Ռ.**, Տիգրան Մեծի անձի եվ գործունեության գնահատականի շուրջ: Ք. ա. 68 թ. Արածանիի ճակատամարտում Հայաստանի հաղթանակի 2080-ամյակի առթիվ, «Վէմ», Եր., 2022, N 3 (79), էջ 48:

գեղեցկության մրցույթներում հաղթում են հայուհիները: Ավելին՝ դաշնակային Թուրքեստան քաղաքում տեղի ունեցող թյուրքական երկրների երգի մրցույթում անգամ հաղթում է Հայաստանի ներկայացուցիչը՝ դրանով աննկատ կերպով մեզ համար ապահովելով **որակյալ թուրքի** կարգավիճակ, ինչից մինչև **թուրքական սուբէթնոսի** վերածվելն ընդամենը մեկ քայլ է:

Քանի որ մեր պաշտոնական հայագիտությունը բավականին հեռու է գլոբալ քաղաքակրթությունը ստեղծած հնդեվրոպացիների՝ որպես մշակութային ընդհանուր հիմք ունեցող մեկ ամբողջության շրջագծում մեր քաղաքակրթական պորտալարի վերականգնման գիտական առաջադրանքից, մտածելու ունակությունից դեռևս չզրկված հայագետները պետք է վերստանձնեն հայկական մշակույթը մաքրելու **կոմիտասյան գործառույթը**, որպեսզի հեռանկարում կարողանան նաև Հայաստանի շուրջը համախմբել հնդեվրոպական մեծ ընտանիքի մշակութային-քաղաքակրթական ներուժը:

Խմբ:

THE CIVIL EDUCATIONAL FUNCTION OF ARCHEOLOGY

Key words - armenology, Armenian view, unity of indivisibles, integration, unification, clinical death, principle of nationality.

Edit.

ЦИВИЛИЗАЦИОННАЯ ФУНКЦИЯ АРМЕНОВЕДЕНИЯ

Ключевые слова - арменоведение, армянский взгляд, единство неделимых, интеграция, унификация, клиническая смерть, принцип национальности.

Ред.